ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԸՆՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 17.3-րդ կետի, ինչպես նաև Պալատի նախագահի 17.12.2013թ. թիվ 70-Լ որոշմամբ հաստատված «Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի 3.1 կետի պահանջներով,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում մարզային համակարգողի ընտրության կապակցությամբ փաստաբանների ժողով (մարզի փաստաբանների համատեղ հավաք) հրավիրելու անհրաժեշտությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. ***2014 թվականի մայիսի 31-ին*** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի համակարգողի ընտրության համար անցկացնել փաստաբանների ժողով (այսուհետ՝ Ժողով)՝ ***«Մարզային համակարգողի ընտրություն»*** օրակարգով:
2. Սահմանել, որ ***քվեարկությունը սկսվում է 2014 թվականի մայիսի 31-ին ժամը 10:00-ին և ավարտվում է նույն օրը՝ ժամը 15:00-ին.***
3. Սահմանել, որ մարզային համակարգողի ***թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը) սկսվում է 2014 թվականի մայիսի 19-ից (ներառյալ) և ավարտվում է 2014 թվականի մայիսի 23-ին ժամը 18.00-ին:***
4. Սահմանել, որ ***քարոզչությունը սկսվում է 2014թ. մայիսի 24-ից (ներառյալ) և ավարտվում է 2014թ. մայիսի 30-ին, ժամը 18.00-ին:***
5. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝
   - եռօրյա ժամկետում իրազեկել Կոտայքի մարզի փաստաբաններին Պալատի ցուցակում գրանցված էլեկտրոնային փոստի և Պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքիյան փողոց 2, 4-րդ հարկ) գտնվող համապատասխան ցուցատախտակի վրա հայտարարությունը զետեղելու միջոցով:
   - սույն որոշման մասին իրազեկել մարզային խնդիրների համակարգման գծով Պալատի նախագահի տեղակալին:
   - հաշվիչ հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

07 մայիսի 2014թ.
թիվ 159-Լ

6. Հանձնարարել Պալատի ֆինանսական տնօրենին՝ մարզային ընտրությունների կազմակերպման և անցկացման, ինչպես նաև հաշվիչ հանձնաժողովի գործունեության համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորումը կատարել Պալատի բյուջեի միջոցների հաշվին՝ հաշվիչ հանձնաժողովի նախագահի ներկայացրած հայտի հիման վրա:

7. Հաստատել Կոտայքի մարզի փաստաբանների համատեղ հավաքի ծանուցման ձևը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

07 մայիսի 2014թ.
թիվ 159-Լ
ք. Երևան

Հավելված
ՀՀ փաստաբանների պալատի նախագահի
07.05.2014թ. թիվ 159-Լ որոշման

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Կոտայքի մարզում մարզային համակարգողի ընտրության համար փաստաբանների ժողով հրավիրելու մասին

ք. Երևան, Զաքիյան 2 07.05.2014թ.

Հարգելի փաստաբաններ,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ 2014 թվականի մայիսի 31-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) դահլիճում (հասցեն՝ ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, մեծ դահլիճ) մարզային համակարգողի ընտրության կապակցությամբ հրավիրվելու է Կոտայքի մարզի փաստաբանների ժողով (մարզի փաստաբանների համատեղ հավաք, այսուհետ՝ժողով):

1. Քվեարկությունը սկսվում է **2014 թվականի մայիսի 31-ին, ժամը 10:00-ին և ավարտվում է նույն օրը՝ ժամը 15:00-ին:**
2. Յուրաքանչյուր մարզի համար մարզային համակարգողների **թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը) սկսվում է 2014 թվականի մայիսի 19-ից (ներառյալ) և ավարտվում է 2014 թվականի մայիսի 23-ին ժամը 18:00-ին:**
3. Քարոզչությունը սկսվում է **2014 թվականի մայիսի 24-ից (ներառյալ) և ավարտվում է 2014 թվականի մայիսի 30-ին ժամը 18:00-ին:**
4. Յուրաքանչյուր մարզի փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**
5. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**
6. Քվեարկության գաղտնիությունը ընտրող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն:

Առաջադրման կամ ինքնաառաջադրման վերաբերյալ դիմումը («Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի 3.32 կետում նշված բովանդակությամբ) պետք է ներկայացվի ք.Երևան, Զաքիյան 2 հասցեով՝ մարզային հաշվիչ հանձնաժողովին:

«Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգը և անհրաժեշտ այլ տեղեկությունները կարող եք ներբեռնել Պալատի www.advocates.am կայքէջից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմի ղեկավար՝